ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-23/55 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների (Երևանի պետական հումանիտար քոլեջի, թիվ 4 և թիվ 9 արհեստագործական պետական ուսումնարանների տանիքներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.08.2023թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաճողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝	Մասիս Աղայանց /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
	Հարություն Մարտիրոսյան /գնահատող/
	Արմեն Քոչարյան /բացող/
	Արտյոմ Պետրոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-23/55 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-23/55 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Ավետիսյան շին մոնտաժ» ՍՊԸ	avetisyanshin@mail.ru
2	«ՄՈՒՐԱԴՅԱՆ ՇԻՆ 86» ՍՊԸ և «ԴԱՎ ԱԼԵՔՍ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ կոնսորցիում	edgar_muradyan_86@mail.ru dav-aleks.proekt@bk.ru
3	«ԳՐԻ ԱՐ ՇԻՆ» ՍՊԸ և «ՇԻՆ ԳՐԻԳ» ՍՊԸ կոնսորցիում	griarshin.tender@mail.ru gexam_grig@mail.ru
4	«ԱՐՄ ՄԵԳԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	armmegagrup@mail.ru
5	«Երվադա» ՍՊԸ	ervada-spy@mail.ru
6	«Սլովակիա» ՍՊԸ	slovakia.ltd@mail.ru
7	«ՎԳ ԵՎ ՆԳ ՇԻՆ» ՍՊԸ	vgevngshin.2023@gmail.com
8	«Օրիոն Ալֆա» ՍՊԸ	harut2571@mail.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները															
		«Ավետիսյան շին մոնտաժ» ՍՊԸ		«ՄՈՒՐԱԴՅԱՆ ՇԻՆ 86» ՍՊԸ		«ԳՐԻ ԱՐ ՇԻՆ» ՍՊԸ		«Օրիոն Ալֆա» ՍՊԸ		«ԱՐՄ ՄԵԳԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ		«Սլովակիա» ՍՊԸ		«ՎԳ ԵՎ ՆԳ ՇԻՆ» ՍՊԸ		«Երվադա» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ															
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	37840300	22700000	27240000	-	-	-	-	-	-	-	-	24481055	29377266	28000000	33600000	-	-
2	47616600	-	-	-	-	31458643	37750372	33500000	40200000	33830000	40596000	-	-	-	-	37351160	44821392
3	28367500	-	-	18725046	22470055	19041752	22850102	21000000	25200000	-	-	-	-	-	-	-	-

5. Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, 2023թ օգոստոսի 31-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 31.08.2023թ. ժամը 10:00-ին:

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «Ավետիսյան շին մոնտաժ» ՍՊԸ-ի, «ՄՈՒՐԱԴՅԱՆ ՇԻՆ 86» ՍՊԸ և «ԴԱՎ ԱԼԵՔՍ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ կոնսորցիումի, «ԳՐԻ ԱՐ ՇԻՆ» ՍՊԸ և «ՇԻՆ ԳՐԻԳ» ՍՊԸ կոնսորցիումի, «ԱՐՄ ՄԵԳԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «Երվադա» ՍՊԸ-ի, «Սլովակիա» ՍՊԸ-ի և «Օրիոն Ալֆա» ՍՊԸ-ի հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 «ՎԳ ԵՎ ՆԳ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են՝ Հայտը ներկայացնելու լիազորությունը այլ անձի վերապահված լինելու մասին փաստաթուղթը (լիազորագիր) և Մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.3 «Ավետիսյան շին մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.4 «ՄՈՒՐԱԴՅԱՆ ՇԻՆ 86» ՍՊԸ և «ԴԱՎ ԱԼԵՔՍ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ 3-րդ չափաբաժնի մասով Ծավալաթերթ-նախահաշվով հաշվարկված աշխատանքների արժեքը, ԱԱՀ-ն և ընդհանուր գինը չեն համապատասխանում գնային առաջարկով ներկայացված արժեքին, ԱԱՀ-ին և ընդհանուր գնին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.5 «ԳՐԻ ԱՐ ՇԻՆ» ՍՊԸ և «ՇԻՆ ԳՐԻԳ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ 2-րդ չափաբաժնի մասով Ծավալաթերթ-նախահաշվում հաշվարկված արժեքի գումարը չի համապատասխանում գնային առաջարկի «Արժեք» սյունակում նշված գումարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.6 «ԱՐՄ ՄԵԳԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հայտը ներկայացնելու լիազորությունը այլ անձի վերապահված լինելու մասին փաստաթղթում (լիազորագրում) բացակայում են դրա տրման և գործողության ժամկետների վերաբերյալ նշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.7 «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ 2-րդ չափաբաժնի մասով Ծավալաթերթ-նախահաշվի 1-ին՝ «Տանիքածածկույթի քանդման աշխատանքներ» բաժնի կշիռը գերազանցում է հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.8 «Սլովակիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Ներկայացված փաստաթղթերի վրա տեսանելի չեն էլեկտրոնային թվային ստորագրությունները:
- 1-ին չափաբաժնի մասով Ծավալաթերթ-նախահաշվով հաշվարկված աշխատանքների արժեքը, ԱԱՀ-ն և ընդհանուր գինը չեն համապատասխանում գնային առաջարկով ներկայացված արժեքին, ԱԱՀ-ին և ընդհանուր գնին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.9 «Օրիոն Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- 2-րդ չափաբաժնի մասով Ծավալաթերթ-նախահաշվի 1-ին՝ «Տանիքածածկույթի քանդման աշխատանքներ» բաժնի կշիռը գերազանցում է հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսը, բացի այդ նույն բաժնի 1-ին տողի «Ծավալը» և «Միավորի արժեքը» սյունակներում լրացված թվերի արտադրյալը չի համապատասխանում «Ընդամենը» սյունակում լրացված թվին:
- 3-րդ չափաբաժնի մասով Ծավալաթերթ-նախահաշվի 1-ին և 2-րդ բաժինների «Ծավալը» և «Միավորի արժեքը» սյունակներում լրացված թվերի արտադրյալը չի համապատասխանում նույն տողում «Ընդամենը» սյունակում լրացված թվին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ՎԳ ԵՎ ՆԳ ՇԻՆ» ՍՊԸ-ին, «ՄՈՒՐԱԴՅԱՆ ՇԻՆ 86» ՍՊԸ-ին, «ԳՐԻ ԱՐ ՇԻՆ» ՍՊԸ-ին, «ԱՐՄ ՄԵԳԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, «Երվադա» ՍՊԸ-ին, «Սլովակիա» ՍՊԸ-ին և «Օրիոն Ալֆա» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2, 6,4, 6.5, 6.6, 6.7, 6.8 և 6.9 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել 2023թ. սեպտեմբերի 4-ին, ժամը 14:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 04.09.2023թ. ժամը 14:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 Սույն արձանագրության 7.1 կետում նշված մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են հանձնաժողովի կողմից 6.2, 6,4, 6.5, 6.6, 6.7, 6.8 և 6.9 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին չափաբաժնի մասով՝

1-ին տեղ զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Ավետիսյան շին մոնտաժ» ՍՊԸ**-ին,
2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Սլովակիա» ՍՊԸ**–ին,
3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՎԳ ԵՎ ՆԳ ՇԻՆ» ՍՊԸ**–ին:

2-րդ չափաբաժնի մասով՝

1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել «ԳՐԻ ԱՐ ՇԻՆ» ՍՊԸ և «ՇԻՆ ԳՐԻԳ» ՍՊԸ կոնսորցիումին,
2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Օրիոն Ալֆա» ՍՊԸ–ին,
3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԱՐՄ ՄԵԳԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ–ին,**
4-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Երվադա» ՍՊԸ –ին:**

3-րդ չափաբաժնի մասով՝

1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել «ՄՈՒՐԱԴՅԱՆ ՇԻՆ 86» ՍՊԸ և «ԴԱՎ ԱԼԵՔՍ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ կոնսորցիումին,
2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԳՐԻ ԱՐ ՇԻՆ» ՍՊԸ և «ՇԻՆ ԳՐԻԳ» ՍՊԸ կոնսորցիումին,**
3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Օրիոն Ալֆա» ՍՊԸ–ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին էլեկտրոնային ձևով՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մասիս Աղայանց /նախագահ/

_____ Հովսեփ Գրիգորյան

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Արմեն Քոչարյան

_____ Արտյոմ Պետրոսյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/